ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ
(Մաս IV. Հարձակում և պաշտպանություն)

ՀԱՐՁԱԿՈՒՄ

Հարձակման ընթացքում մարտիկի հիմնական խնդիրն է հնարավորինս անաղմուկ և գաղտնի մոտենալ հակառակորդին, ինչը հնարավոր է միայն բավարար պայմանների դեպքում.

- անաղմուկ և գաղտնի տեղաշարժում՝ օգտագործելով ռելիեֆը և տեղանքի առանձնահատկությունները,
- քողարկման պահպանում՝ օգտագործելով անհատական քողարկման միջոցները (հակառակորդի քողարկող հանդերձանք, համազգեստ և նույնականացման նշաններ),
- ծխածածկույթի կիրառում (ծխածածկույթային գլանակներ կամ հրդեհներ ստեղծում),
- եղանակային պայմանների օգտագործում (մառախուղ, անձրև, ձյուն):

Հարձակման ժամանակ յուրաքանչյուր մարտիկ պետք է իմանա, որ թշնամին դիրքերը սարքավորելու համար ակտիվորեն կիրառելու է ինժեներական արգելափակոցներ (սակավանկատ մետաղալարեր (МЗП), փշալարեր (օրինակ՝ «Егоза» տիպի), ականապայթյունային արգելափակոցներ (հակահետևակային և հակատանկային ականներ): Ստորաբաժանումների թևերում և կցատեղերում, անտառապատ տարածքներում դիրքերի դիմաց հակառակորդը ակտիվորեն կիրառելու է անտառային փլվածքներ: Հետևաբար, հարձակման հիմնական խնդիրներից մեկը հակառակորդի պաշտպանության թույլ կետերի բացահայտումն է, որպեսզի դրանք օգտագործելով թափանցեն թևեր կամ թիկունք:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մարտիկ պետք է իմանա, որ մարտը չի ավարտվում թշնամու դիրքերը գրավելով: Առաջադրանքը կատարելուց հետո ձեզ հարկավոր չէ հանգստանալ, բայց անմիջապես անհրաժեշտ է հաշվարկել մնացած զինամթերքի պաշարը, հնարավորության դեպքում դրանք լրացնել ռազմավարի հաշվին, անմիջապես սկսել պատրաստվել հրետակոծությանը և հակառակորդի հնարավոր հակագրոհին: Ջոկի հրամանատարից պաշտպանության խնդիր ստանալուց հետո, կրակ վարելու համար, մարտիկը պետք է ընտրի ու սարքավորի առնվազն երեքից հինգ հիմնական և պահեստային դիրքերը (դուք չեք կարող կրակել միայն մեկ դիրքից): Անցնելով դիրքերի սարքավորմանը, անհրաժեշտ է մաքրել հրաձգության հատվածները, եթե անհրաժեշտությունը կա ամրապնդել և քողարկել դիրքերը, փորել (բացել) ապաստարաններ,«աղվեսափոսեր», անհատական բջիջ-թաքստոցներ:

Կորցնելով դիրքերը հակառակորդը կփորձի անցկացնել օդային հետախուզում՝ նշանակետերը (մարդկային ուժի, տեխնիկայի կենտրոնացումների, խմբային զենքի դիրքերի՝ խոշոր տրամաչափի գնդացիրներ, ԱԳՀ-17 և այլն) բացահայտելու համար, որից հետո կսկսի կիրառել հրետանին: Հակառակորդի հրետանային պատրաստության ընթացքում պետք է պատրաստ լինել նրան, որ «կրակային պատնեշ»-ից հետո սկսվելու է հակառակորդի հետևակի գրոհը, ուստի միշտ անհրաժեշտ է ունենալ լավ քողարկված դիտորդ, ցանկալի է՝ խրամատների գծից որոշակի հեռավորության վրա: Այն դեպքերում, երբ դուք պահպանել եք քողարկման բոլոր պահանջները, և օդային հետախուզման ընթացքում հակառակորդը չի կարողացել բացահայտել ձեր պաշտպանության համակարգը, ապա նա կարող են կիրառել,այպես կոչված «կապիկների» մարտավարությունը, երբ հակառակորդի հետևակը նմանակում է հարձակում՝ վարելով անհանգստացնող կրակ դիրքերի ուղղությամբ, այն նպատակով, որպեսզի հրահրի պատասխան կրակ բացել և բացահայտել ձեր կրակային միջոցները՝ դրանք անմիջապես հրետանիով ճնշելու կամ ոչնչացնելու համար: Այսպիսի դեպքերում հակառակորդի «կապիկների» հետևակի ուղղությամբ կրակ է արձակվում ԱԳՀ-17-ի և ՍՊԳ-9-ի փակ կրակային դիրքերից՝ առանց առաջնագծի կրակային միջոցները ապաքողարկելու:

Պաշտպանությունը կազմակերպելիս յուրաքանչյուր մարտիկ պետք է իմանա, որ թշնամու կողմից պաշտպանված դիրքերի վրա հարձակվելու ժամանակ կա արդյունավետ կրակի բացման մի քանի բնագծեր.

1. ականանետերի համար՝ 5-3 կմ,
2. տանկերի և մարտական մեքենաներ համար՝ 2-1 կմ ,
3. ԱԳՀ-17-ից, գնդացիրներից՝ 1,5 - 0,6 կմ,
4. հրաձգային զենքերից և նռնականետերից՝ 400 - 100 մ:

Սա նշանակում է, որ առկա միջոցներով հակառակորդին հրետակոծել (գնդակոծել) կարելի է միայն այն դեպքերում, երբ կա թշնամուն հարվածելու կամ նրան զգալի վնաս հասցնելու վստահ հավանականություն: Հարկավոր չէ, թշնամուն 3000 մ հեռավորության վրա նկատելիս, փորձել նրան ոչնչացնել ՀՍԲՏ-ից կամ ՊԿ-ից, չհաշված 1500 մետր հեռավորության վրա գտնվող թշնամու ոչնչացումը հրաձգային զենքերից:

Անիմաստ և անարդյունավետ գնդակոծումով դուք միայն բացահայտելու եք ձեր դիրքերը:

Թշնամու ուղղությամբ կրակը կարգավորելու համար, պաշտպանությունը կազմակերպելիս, անհրաժեշտ է նաև նշանակել կողմնորոշիչներ:

Հակառակորդի օդային հետախուզման ակտիվ կիրառման հետ կապված դիրքերը կահավորելիս և դրանք քողարկելիս պետք է շեշտը դնել դիրքերն օդից անտեսանելի լինելու վրա՝ խրամատների առաջնագծից մինչև բլինդաժներ, ինչպես նաև անձնակազմի համար նախատեսված թաքստոցներ հաղորդակցության անցումները պետք է լավ քողարկված լինեն ՝ կիրառելով ինչպես քղարկող ցանցեր, այնպես էլ ձեռքի տակ գտնվող նյութեր: Հատկապես անհրաժեշտ է մանրակրկիտ քողարկել դիտակետերը և խմբային զենքերի (НСВ «Утес», АГС-17и СПГ-9) խրամաբջիջները:

Պետք է հիշել նաև, որ եթե հակառակորդը ВОГ-17 (25) վարնետքի համար կիրառում է քվադրոկոպտերներ, ապա արդյունավետ ռմբակոծման համար օպերատորին անհրաժեշտ է այն իջեցնել 70 մ բարձրության վրա: Այս դեպքում քվադրոկոպտերը դառնում է թիրախ և այն կարելի է խոցել նշանառու կրակով: Եթե վարնետքի համար օգտագործվում են Ф-1 նռնակները, ապա քվադրոկոպտերը կարող է լինել մինչև 500 մ բարձրության վրա: Այս դեպքում դժվար է խոցել շարժվող թիրախը: Կարելի է փորձել ПКМ գնդացրի կրակով վնասազերծել այն: Ընդհանուր առմամբ, օդային թիրախների ուղղությամբ կրակը ավելի արդյունավետ կարգավորելու համար, որպես կանոն, խորհուրդ է տրվում կիրառել լուսածրող զինամթերք:

Աղբյուրը. https://vk.com/wall-127249967_19094?ysclid=m9enjnjuuy803997394